ՀԻՆ ՀԱՅ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

IV.

Գիւղացիութեան դիրքը նախարարական կազմի մէջ որոշելու համար անհրաժեշտ է պարզել նախապէս երկու կարեւոր տերմին, ռամիկ եւ շինական: Կարեւոր է մանաւանդ սրանց փոխադարձ յարաբերութիւնը որոշել:

Պ. Մանանդեան կարծում է, որ ռամիկ եւ շինական նոյնանիշ չեն եւ որ առաջինը աւելի լայն հասկացողութիւն է եւ բովանդակում է իր մէջ ո՛չ միայն շինականը, այլ եւ քաղաքացին կամ քաղաքի ազգաբնակչութեան մի մասը: Եւ ինչ որ զարմանալի է՝ պէտք է տեսնում մատենագրական աղբիւրներին դիմել իր կարծիքը հաստատելու համար: Ոչ միայն Բիւզանդը եւ Փարպեցին են վկայութեան կոչւում, այլ անգամ Ժ. դարում ապրող Յովհան Կաթողիկոսը:

Ինչ վերաբերում է բառի ստուգաբանութեան, նա յարում է Հիւբշմանի կարծիքին, որ ռամիկ նոյնն է, ինչ որ «երամ, երամակ:»

Կոչ է անում նաեւ ոսկեդարեան թարգմանութեանց եւ ուզում է հաւատացնել, որ ռամիկ այնտեղ համապատասխանում է իբրեւ թէ յոյն demos, demotes բառերին, որ նշանակում են ամբոխ, խառն ի ճաղանճ բազմութիւն:

Դժուար թէ կարիք կայ նկատելու, որ Հիւբշմանի ստուգաբանութիւնը եւ նրա վրայ հիմնուած դատողութիւնները ոչինչ չեն աւելացնում այն նշանակութեան, որ հետագայում ստացել է ռամիկ բառը:

Յայն demos խուժան չէ, ինչպէս եւ հայ ռամիկը: Ս. Գիրքը գործ է ածում ամբոխ համաձայն յոյն ochlos կամ thombus խառնեճաճաղանճ կամ խառնաճաղանճ՝ յոյն summiktoi.

Ռամիկ պատահում է ոչ յաճախ եւ միշտ ունի իր դէմ յոյն բնագրում տարբեր բառեր՝ ethnos, laos, demotes, որ նշանակում են «ժողովուրդ:» Մի անգամ ռամիկ համապատասխանում է յոյն elaxistos, որ է «նուազագոյն:»

Արժանի է ուշադրութեան որ հակադրւում է իշխանի կամ թագաւորի եւ կամ հեծեալ ոյժերի: Այսպէս՝

«Դատաստան անաչառ իշխանաց լինի, ռամիկն ներելի ողորմութեամբ» (Իմ. Զ.7): «Եւ հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար, թող զայլ ռամիկն ամենայն» (Յուդ. Է. 2), երկրորդ անգամ (Յուդ. Է.10):

«Արար կոչունս սիրելեաց իւրոց եւ մեծամեծաց . . . եւ ամենայն իշխանաց նախարարացն,» եւ «դարձեալ միւս անգամ եւս կոչել ի հարսանիսն զռամիկ քաղաքակիցս իւր» (Եսթ. Ա.3–5):

Շինական բառը միայն միանգամ է պատահում Ս. Գրքում եւ այն շինականագոյն խորթ ձեւով, որի դէմ յոյն բնագիրն ունի agroikoteros (Բ. Մակ. ԺԴ.30), որ է գեղավարի, դռեհիկ:

Թւում է, թէ շինական ոչնչով բարձր չէ ռամկից: Վահան Մամիկոնեան Վաղարշ թագաւորի առաջ խօսելիս իր հակառակորդների հասցէին ասում է որ նրանք այնպիսի ստոր մարդիկ են, որ «կրսեր շինականք աշխարհին հայոց հաց գարշէին ուտել»: Կրսեր շինական արհամարհական շեշտ ունի, հաւասար դռեհիկի:

Պատմիչների գործածութիւնից մի բան է հետեւում միայն, որ ռամիկ եւ շինական նա է, որ ազնուական չէ, իսկ ինչ տարբերութիւն կայ երկուսի մէջ, այդ մասին եւ ոչ մի ակնարկ: Բիւզանդ եւ Եղիշէ աւելի սիրում են գործածել շինական քան ռամիկ, մինչդեռ Փարպեցու մօտ հակառակն է տեսնւում: Շաղգոմի գիւղերում թաղնուած ժողովուրդը, որի վերայ յարձակուեց Հազարաւուխտը Վահանին հետապնդելիս, Փարպեցին կոչում է ռամիկ: Դուին քաղաքում եւս նախարարների եւ ազատների կից նա գիտէ ռամիկներ: Այն ինչ Խորենացին պատուիրում է գեղջուկներին «պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս:»

Մատենագիրների լեզուն որոշ չէ: Եթէ